



Բացօթյա խաղահրապարակների վերաբացման Արձանագրություն

Վերջին Փոփոխությունները

11/23/20: Թարմացվել է պարզաբանելու համար, որ բնակավայրերում գտնվող բացօթյա խաղահրապարակները, որոնք բաց չեն հանրության համար, կարող են վերաբացվել: Օգտագործման նպատակով վերաբացվելու համար պարտադիր չէ, որ խաղահրապարակները շահագործվեն քաղաքի, նահանգի, շրջանի կամ դաշնային կառավարության կողմից:

Լոս Անջելեսի Ծրջանի Հանրային Առողջապահության Վարչությունը որդեգրում է գիտելիքները և հանրային առողջապահության փորձի վրա հիմնված փուլային մոտեցում՝ թույլ տալու որոշ վայրերի ապահով վերաբացումը: Ստորև նշված պահանջները վերաբերում են Բացօթյա խաղահրապարակներին, որոնց վերաբացումը թույլատրվել է Նահանգի Հանրային Առողջապահության Պատվարմանատուի Հրամանով: Նահանգապետի կողմից նշված այս հատուկ վայրերում պարտադրված նայմաններից բացի, այս վայրերի գործունեությունը պետք է համապատասխանի նաև հետևյալ Ցուցակում շարադրված բոլոր պայմաններին:

Այս արձանագրությունը վերաբերում է զբոսայգիներում, ճամբարային տարածքներում և այլ վայրերում գտնվող բացօթյա խաղահրապարակներին: Փակ խաղահրապարակներին ու ընտանեկան զվարճանքի կենտրոններին այս պահին չի թույլատրվում վերաբացվել:

Բացօթյա խաղահրապարակներ են համարվում այն խաղահրապարակները, որոնք ամբողջովին գտնվում են դրսում, անվճար են մուտքի և օգտագործման համար, հիմնականում նախատեսված են ծառայելու կես մղոն հեռավորության վրա առողջ քակիչներին և սովորաբար ունեն հանգստի սարքավորումներ, օրինակ՝ խաղային կառույցներ, սահարաններ, ճոճանակներ և այլն, որոնք նախատեսված են երեխաների ֆիզիկական արտաթորումն ու զարգացումը խթանելու համար: Բացօթյա խաղահրապարակները կարող են պետության կողմից պարտադրված տարածք տրամադրել նախադպրոցական հաստատությունների համար, սակայն դրանց օգտագործումը պետք է նախապես ծրագրվի՝ հանրության կամ այլ դպրոցների հետ միաժամանակյա օգտագործումից խուսափելու համար:

Քաղաքային և շրջանային գործադարություններն իրավունք ունեն փակել խաղահրապարակը, եթե հնարավոր չէ անվտանգ կերպով ապահովել վարակի վերահսկման կամ ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջները:

Խնդրում ենք սկսածուր ուղեցույցները և Մույն փաստաթուղթը կարող է թարմացվել լրացուցիչ տեղեկությունների և ռեսուսների հասանելի դառնալու դեպքում, ուստի անպայման կանոնավոր կերպով ստուգեք Լոս Անջելեսի Ծրջանի վեբ կայքը՝ <http://www.ph.lacounty.gov/media/Coronavirus/>՝ այս փաստաթղթի թարմացումների և որևէփոփոխությունների ծանոթանալու համար:

Ցուցակն ընդգրկում է.

- (1) Աշխատատեղի գործունեության ծրագրեր ու գործելակերպ՝ աշխատողների առողջությունը պաշտպանելու համար
- (2) Ֆիզիկական հեռավորությունն ապահովելու միջոցառումներ
- (3) Վարակի վերահսկման միջոցառումներ
- (4) Հաղորդակցությունն աշխատակիցների և հասարակության հետ
- (5) Կարևոր ծառայություններին անաչառ հասանելիության ապահովման միջոցառումներ

Այս հինգ հիմնական ոլորտները պետք է հաշվի առնվեն ձեր հաստատության կողմից վերաբացման ցանկացած արձանագրության մշակման ժամանակ:

Սույն ուղեցույցում ընդգրկված բոլոր բացօթյա խաղահրապարակները պետք է իրականացնեն



**Ներքոհիշյալ բոլոր կիրառելի միջոցառումները և պատրաստ լինեն բացատրելու, թե ինչու որևէ
չիրականացված միջոցառում կիրառելի չէ:**

Հաստատության անունը՝ _____

Հաստատության հասցեն՝ _____

A. ՖԻԶԻԿԱԿԱՆ ՀԵՌԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Խաղային կառույցների համար կամ այլ տարածքներում, որտեղ կարող են ստանալ մեկից ավելի երեխաներ, դիտարկեք ժապավենով կամ այլ տեսողական ցուցիչներով նշումներ անելու տարբերակը՝ օգնելու երեխաներին գնահատել, թե արդյոք իրենք մեծ ոտնաչափ հեռու են միմյանցից:
- Խնամակալներին/մեծահասակներին պետք է հիշեցնել, որ իրենցից պահանջվում է տարբեր բնակարաններում բնակվող երեխաներին իրարից պահել առնվազն վեց ոտնաչափ հեռավորության վրա:
- Եթե կա նախապես ծրագրված գործողություն (միջոցառում), որի համար անհրաժեշտ է օգտագործել խաղահրապարակը, ապա խաղահրապարակի այդ ընթացքում պետք է փակ լինի հանրության ավելի լայն շրջանակի համար:
- Երեխաների խնամքի ծրագրերը, դպրոցները, արտադպրոցական և երեխաների ու երիտասարդների համար նախատեսված այլ ծրագրերը, որոնց ժամանակ երեխաները պետք է լինեն խմբերում, չեն կարող խաղահրապարակներից օգտվել այն ժամերին, երբ դրանք բաց են հանրության համար: Այնուամենայնիվ, եթե խաղահրապարակի հսկիչը թույլ տա, երեխաների խնամքի, դպրոցական կամ այլ ծրագրերը կարող են նախապես պատվիրել այնպիսի ժամ, երբ խաղահրապարակը բացառապես կօգտագործվի ծրագրի կողմից: Խաղահրապարակում գտնվելու ընթացքում խմբերը պետք է առանձին լինեն և խուսափեն իրար միանալուց:

B. ՎԱՐԱԿԻ ՎԵՐԱՀՄԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- Խաղահրապարակ ժամանող այցելուներին պետք է փակցված նշանների միջոցով հիշեցնել, որ խաղահրապարակում գտնվելու ամբողջ ընթացքում հարկավոր է կրել դիմակ: Սա վերաբերում է բոլոր չափահասներին և շտաբային և ավելի մեծ երեխաներին: Այս պահանջից ազատվում են միայն այն անձինք, որոնց բուժաշխատողը հանձնարարել է չկրել դիմակ, սակայն նրանք պետք է հաշվի առնեն իրենց իրենց և այլ մարդկանց սպառնացող վտանգը՝ մինչ բացօթյա խաղահրապարակ այցելելու որոշում կայացնելը:
- Խաղահրապարակում պետք է տեղադրվեն [ցուցանակներ](#), որոնք կզգուշացնեն, թե որ ախտահանիչներ ունեցող այցելուները չպետք է մտնեն խաղահրապարակի տարածք:
- Պատվիրության սահմաններում պետք է խաղահրապարակն ապահովել ձեռքերի լվացման կայաններով կամ ախտահանիչներով՝ նպաստելու ձեռքերի հիգիենայի պահպանմանը՝ հատկապես ծանրաբեռնված ժամերին: Օգտագործեք ձեռքերի ախտահանիչ միջոց, որը պարունակում է 60% էթանոլ կամ 70% իզոպրոպանոլ: Երբեք մի՛ օգտագործեք մեթանոլ պարունակող ախտահանիչ միջոց, քանի որ այն թունավոր է երեխաների և մեծահասակների համար:
- Ծնողները, խնամակալները և հսկող մեծահասակները պետք է պատրաստ լինեն խաղահրապարակի սարքավորումներն օգտագործելուց առաջ և հետո իրենց երեխաներին տրամադրել ձեռքերի ախտահանիչ միջոց:
- Մաքրող քիմիական նյութեր ընտրելիս խաղահրապարակի հսկիչները պետք է օգտագործեն Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության կողմից հաստատված N ցուցակում գտնվող՝ COVID-



19-ի դեմ արդյունավետ արտադրանքներ՝ հետևելով ապրանքի հրահանգներին: Օգտագործեք այնպիսի ախտահանող միջոցներ, որոնք պիտակավորված են որպես վիրուսային հարուցիչների առաջացման դեմ արդյունավետ միջոցներ, նուրազված կենցաղային քլորային (բլիչ) լուծույթներ (5 ճաշի գդալ՝ մեկ գալոն ջրին) կամ առնվազն 70% ալկոհոլ պարունակող սպիրտային լուծույթներ, որոնք հարմար են մակերեսների համար: Աշխատակիցներին սովորեցրեք հետևել արտադրողի ցուցումներին և Cal/OSHA պահանջներին՝ անվտանգ օգտագործման համար: Մաքրող կամ ախտահանիչ միջոցներ օգտագործող աշխատողները պետք է կրեն ձեռնոցներ և այլ պաշտպանիչ միջոցներ՝ ապրանքի պահանջներին համապատասխան:

- ❑ Համոզվեք, որ բոլոր աշխատողները վերապատրաստվել են անհրաժեշտության դեպքում օգտագործել և ունենալ մաքրող և ախտահանող ունիվերսալ միջոցների բավարար պաշար:

C. ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- ❑ Խաղահրապարակի առցանց հարթակները (կայք, սոցիալական ցանցեր և այլն) պետք է հստակ տեղեկություններ տրամադրեն ընթացիկ արձանագրությունների դիմագրերի պատշաճ օգտագործման անհրաժեշտության, վարակի տարածման վերահսկման միջոցառումների կիրառման և ֆիզիկական հեռավորության պահպանման պահանջների վերաբերյալ:
- ❑ Տարածքի հսկիչները պետք է բոլոր բացօթյա խաղահրապարակներում տեղադրեն ցուցանակներ՝ այցելուներին հիշեցնելու ֆիզիկական հեռավորության պահպանման և վարակի տարածման վերահսկման հետևյալ պահանջների մասին.
 - 2 և ավելի տարեկանից բարձր ցանկացած անձ պետք է խաղահրապարակում գտնվելու ողջ ընթացքում կրի դիմակ :
 - Մնացեք տանը, եթե ունեք ջերմություն, հեղձ, շնչարգելություն կամ դժվարացած շնչառություն:
 - Խաղահրապարակում չի թույլատրվում ուտել կամ խմել, որպեսզի հնարավոր լինի ողջ ընթացքում դիմակ կրել:
 - Մեծահասակներից կամ բնամակայներից պահանջվում է հետևել իրենց երեխաներին և համոզվել, որ նրանք իրենց տան անդամ չհանդիսացող մարդկանցից պահպանում են առնվազն վեց ոտնաչափ հեռավորություն:
 - Խաղահրապարակի վայրը առաջ և գնալուց հետո լվացեք կամ ախտահանեք ձեր ձեռքերը:
 - Այցելությունները կարող են տևել մինչև 30 ր, երբ խաղահրապարակում այլ մարդիկ կան:
 - Տարեցներին և առողջական խնդիրներ ունեցող անձանց պետք է հիշեցնել խուսափել այլ մարդկանց հետ մոտակայությամբ խաղահրապարակում գտնվելուց:

Վերևում ներգրկված ցանկացած լրացուցիչ միջոցառում պետք է նշվի առանձին էջերում, որը բիզնեսը պետք է կցի այս փաստաթղթին:

Այս արձանագրության հետ կապված ցանկացած հարցի կամ մեկնաբանության դեպքում կարող եք կապ հաստատել հետևյալ անձի հետ.

Բիզնեսի կոնտակտային անունը՝



Հեռախոսահամարը՝ _____
Վերջին վերանայման
ամսաթիվը՝ _____

Կասեցված է՝ այլևս կիրառելի չէ